

միանգամայն անմեղ և անմասն անձիւր: Տայ Աստուած, որ
խաղաղութիւնը նորից հիմք դնի ժողովրդի մէջ և վերջ տրուի
այսքան անմեղներէ կոտորածներին:

ԲԱՐԵՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Церк. ВѢСТНИКЪ-ում կարդում ենք.

Այժմ հասարակութեան մէջ շատ է խօսուում իշխանութեան բարեհայեցողութեան մասին. մինչդեռ վարչական այդ ձևը ոչ մի տեղ այն չափով չի գործադրուել և չի գործադրուում, որչափ հոգևոր իշխանութեան մէջ:

Մինչև հոգևոր կանոնատրիանների վերաբերեալ օրինաց ժողովածուի հրատարակութիւնը 1841 թուին, տեղական թեմական իշխանութեան կամքը փոխարինում էր թեմում քաղորդէնքների: Թէև վերջին վաթսունամեակին գրուած են հոգևորականութեան վերաբերեալ բաղմամբիւ օրէնքներ, բայց և այնպէս ցայսօր առաջնակարգ տեղ է բռնում բարեհայեցողութիւնը: Վերևում առաջ բերած ճշմարտութիւնն առաւել պատկերաւոր դարձնելու համար առաջ կը բերենք մի քանի օրինակներ:

Նախ՝ եպիսկոպոսը կարող է ըստ իւր բարեհայեցողութեան քահանայական ուղած տեղը տալ կիսադրագէտ, ոչ մի տեղ չը սովորած մարդուն, թէկուզ այդ տեղի համար խնդրած լինին ծառայած աւագ քահանաներ և քահանաներ, որոնք ուսումնաւարտել են հոգևոր դպրոցներում կամ ճեմարաններում: Երկրորդ՝ միջան ծանր է «ծառայութեան օգտի համար» մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրութիւնը (սովորաբար լաւ տեղից տեղից վատն են փոխադրում)՝ քահանաների, սարկաւազների և դպիրների համար: Վարձատրութեան պատրուակաւ հոգևորականների այդպիսի փոխադրութիւնը խիստպէս ամենածանր պատիժ է: Բայց աւելի սոսկալին այն է, որ չի կարելի բողոքել բարեխնամ իշխանութեան դէմ, որը իւր ուշադրութեամբ դանաղանում է և ճանաչում հոգևոր մշակներին: Երրորդ՝ հոգևորականներէ թեմական ժողովները մեղանում հրաւիրում են սովորաբար վճռելու արդէն առաջուց վճռուած խնդիրներ: Թրէնքով այդ ժողովներին պէտք է մասնակցեն տեղական հոգևորականութեան կողմից ընտրուած պատգամաւորներ, այն ինչ շատ թեմերում այդպիսի ժողովները սովորաբար կազմուած են լինում բարեկարգիչներէ, որոնք Աննօղի 1875 թուի սեպտ.

23 № 41 հրամանի համաձայն նոյն իսկ պատգամաւոր չը պէտք է ընտրուին, որպէս զի հոգևորականութիւնը հնարաւորութիւն ունենար աւելի ազատօրէն քննելու իւր դործերը: Զորքորդ՝— կոնսիստորիան գիտենալով, որ տեղական հոգևորականութիւնը ամբողջովին իրենից կախումն ունի, յաճախ ամբողջ ամիսներով քահանաների ամենաանյետաձգելի խնդիրներին ուշադրութիւն չի դարձնում: Բայց հոգևոր կոնսիստորեաների թերութեանց մասին խօսել չ'արժէ. նրանց հեղինակութիւնն արդէն ընտրոջ է: Դեկտեմբերի 12-ին Բարձրագոյն հրամանով ի միջի այլոց հրամայուած է Վարչական մարմինների բարեհայեցողութեան շրջանակը սեղմել. (որը մամուլի մէջ յայտնի է կամայականութիւն անունով): Հոգեպէս որքան պէտք է թարմանար մեր քահանայական դասը, եթէ այդ շնորհին նա էլ արժանանար:

— Մեղանում, թէ քահանայը ընտրուած են ծխականներից և սրահուում այս ինչ եկեղեցու վրայ, սակայն թեմականների բարեհայեցողութիւնը ձեռնադրութեան պատկն էլ է քանդում շատ յաճախ և ժողովրդի իրաւունքն էլ: Այս ինչ կամ այն ինչ կը թուած և գործունեայ քահանային առեւն ու անարգելը և նրա տեղ աւազակներին խրախուսելը տեսել ենք անձամբ շատ տեղ, իսկ թէ կոնսիստորիան և հոգևոր կառավարութիւններն ինչ տարօրինակ կամակատար են հանդիսանում առաջնորդների և փոխանորդների բարեհայեցողութիւններից ըղիած առաջադրութիւնների, այդ քաջ գիտեն հէնց իրենք կոնսիստորիաները: Արդեօք մեր իշխանաւորների բարեհայեցողութիւններին որ օրէնքը պէտք է սահման դնի և երբ, ո՞վ կարող է պատասխանել:

Երուսաղէմում այս տարուայ ծննդեան տօներին Սուրբ Գերեզմանի մօտ յոյն և լատին հոգևորականների մէջ կռիւ պատահեց: Այդ տխուր դէպքերը թէ և դեռ չեն հրատարակուած, սակայն հաւաստի աղբիւրներից յայտնի է, որ լատին հոգևորականներին եռանդուն պաշտպանութիւն են ցոյց տուել գերմանական և իտալական հիւպատոսները, որոնք յաջողեցին մերժել տալ թիւրք նահանգապետին Փրանսիական հիւպատոսի պահանջը՝ դէպքը խառը մասնաժողովի միջոցաւ քննել տալու մասին և նկատել նրա պրաւօսլաւ վանականներին ցոյց տուած համակրանքը՝ որպէս յանցանք: Ընդհանրապէս ամբողջ դործը շահագործուած է Փրանս—առուսական ազդեցութիւնը Արևելքում թուլացնելու նպատակաւ: Այսպիսի հանգամանքներում

յոյն վանականները կարող են երկիւղ կրել, որ կը դատաւարա-
տուեն ըանտարկութեան՝ ճիշտ նոյն ձևով, ինչպէս որ այդ
տեղի ունեցաւ 1901 թուի նոյնամաս գործում:

ԻՆչ՝ւմն է վրդութիւնը.

Այս վերնագրով Церк. Вѣстник-ի № 6-ում տպուած է
Ձեւցով քահանայի յօդուածը, որն այնքան զեղեցիկ կերպով է
լուսարանում մեր ժողովրդի ներկայ անտեսական կացութիւնն
ու հոգևորականների սովորական դերքն ու գործունէութիւնը,
այնպիսի համարձակ և մերկ ճշմարտութիւն է, որ չենք կարող
ամբողջովին առաջ չը բերել Արարատի ընթերցողներին ծանո-
թացնելու համար, մանաւանդ որ մեր գիւղացին, գործաւորն
ու քահանան էլ միանգամայն նոյն վիճակում և նոյն պայման-
ներումն են ապրում ու գործում: Քահանաներից մինը նոյն
թերթի № 3-ում «Տխուր դէպքերի պատճառ» էր համարում
գործարաններին կից ոսիական եկեղեցիներ չունենալը, բան-
ւորների անտեսական վատ պայմանները, ոսիական քահանա-
ների բացակայութիւնը և այլն: Ձեւցովը գտնում է, որ այդ
բոլորը ճշմարտութիւն է: Բայց կարծել, որ դրանումն է ողջ
չարիքը, նշանակում է նկատել մի միայն թշուառութեան մի
մասը և փոխանակ արմատական բժշկութեան, առաջարկել
միայն ցաւերը մեղմող օժանելիք:

«Մեր ժողովուրդը բազմաշարժար է. նիւթական աղքատու-
թիւնը վաղուց ճնշում է նրան. նա այդ բանին սովորել է որ-
պէս հայրենի արհաւիրքի: Ի՞նչ արած, — դատում է նա. — երևի
Աստուած այդպէս է կամեցել. ամենքն էլ հօ՛ խառ չեն հագ-
նելու . . . Թող միայն տմեն ինչ կանոնաւոր լինի, ճշմարտու-
թեամբ, խղճով և Աստուծոյ կամքով լինի»: Եւ երբ չքաւորու-
թիւնը իրենից է, նա անտրտունջ տանում է այն: Բայց եթէ
տեսնում է, որ նրա չքաւորութեան խնդրում վնասուել է Աս-
տուածային ճշմարտութիւնը, այդ ժամանակ . . . այո՛, այդ
ժամանակ դադարում է համբերող լինելուց, այն ժամանակ ոչ
տաճարը և ոչ էլ հովիւը կարող է դապել նրան:

— «Ինչո՞ւ կառավարութեան դէմ, կեանքի սօցիալական
կազմակերպութեան դէմ ապստամբութիւն չկայ և չի կարող
լինել պրաւօսլաւ երկրագործ ժողովրդի մէջ գիւղերում, հար-
ցնում էր «Տխուր դէպքերի պատճառներ»-ի հեղինակը»:

Նա մի քանի բան մոռացել է. — ասում է Ձեւցովը: — Հասպ